

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**N 50/11**

**Քաղ.Երևան**

**23 նոյեմբերի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա. Ֆ. Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. նոյեմբերի 23-ի նիստում (արձանագրություն N 7.2 ) քննարկեց «ՍԻԿՈՆԵ» ընկերության կողմից 2011թ. նոյեմբերի 4-ին ներկայացված «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» (հայտի համարը՝ N 20110189) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերի լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» 87.2-րդ կետը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ:

Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Մերժման մեջ նշված է, որ նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն վերարտադրում է «Սարմետ» ՍՊԸ-ի «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» (ռուս.) (N 8264) և Otkritoe Oksionernoje obshestvo "Nizhegorodsky maslo zhirovoy kombinat" 11, Zhirokombinata ընկերության «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» (ռուս.) (IR 844601) ապրանքային նշանները:

Նշված է, որ բողոքարկողը ի գիտություն է ընդունել, որ ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» ապրանքային նշանը գրանցված է «ՍԱՐՄԵՏ» ՍՊԸ-ի և «Nizhegorodsky maslo-zhirovoy kombinat» ընկերության կողմից 29-րդ դասի ապրանքների համար:

Բայց համամիտ չէ գործակալության որոշման հետ և գտնում է, որ գործողությունը չի կարող համարվել անբարեխիղճ, քանի որ ապրանքային նշանի նպատակային օգտագործման ապրանքատեսակները էապես տարբերվում են առ այսօր գրանցվածներից: Բողոքարկող ընկերության հայտարկված ապրանքատեսակները, ինչպես նաև օգտագործման ձևերը և փաթեթավորումը տարբեր են, որի օգտագործումը չի կարող հանդիսանալ անբարեխիղճ մրցակցություն և ապրանքատեսակները չեն կարող համարվել շփոթության աստիճան նման:

Բողոքարկողը խնդրում է վերանայել փորձաքննության որոշում և գրանցել հայտարկված ապրանքային նշանը 30-րդ և 31-րդ դասերի համար, քանի որ բողոքարկողի հայտարկված ապրանքատեսակները լիովին տարբերվում են «ՍԱՐՄԵՏ» ՍՊԸ-ի և «Nizhegorodsky maslo zhirovoy kombinat» -ի կողմից 29-րդ և 21-րդ դասերի համար գրանցված ապրանքատեսակներից:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. նոյեմբերի 4-ին «ՍԻԿՈՆԵ» ընկերության կողմից ներկայացվել է «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» (հայտի համարը՝ N 20110189) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Կոլեգիայի անդամի կողմից համառոտ նշվեց մերժման հիմքերը և բողոքի բովանդակությունը: Նշվեց, նաև, որ «ՍԻԿՈՆԵ» ընկերությունը «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» ապրանքային նշանի գրանցման համար դիմել էր 29-րդ, 30-րդ և 31-րդ դասերի համար, իսկ մերժվել էր 29-րդ և 21-րդ դասերի համար «ՍԱՐՄԵՏ» ՍՊԸ-ի և «Nizhegorodsky maslo zhirovoy kombinat»-ի կողմից գրանցված «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» ապրանքային նշանների պատճառով:

Նշվեց, որ փորձաքննության բաժինը խիստ է մոտեցել, մերժելով «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» ապրանքային նշանի գրանցումը բոլոր հայտարկված դասերի համար և հայտնեց այն կարծիքը, որ, թերևս, կարելի է գրանցել ապրանքային նշանը 30-րդ և 31-րդ դասերի համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «ՍԻԿՈՆԵ» ընկերության բողոքը և չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը մասնակիորեն՝ գրանցելով «ԽՈՁՅԱՅՈՒՇԿԱ» (հայտի համարը՝ N 20110189) ապրանքային նշանը 31-րդ դասի ապրանքների համար, ինչպես նաև 30-րդ դասի ապրանքների համար, բացառությամբ՝ մեղր, մանանեխ, քացախ, սոուսներ (համեմունք) և համեմունք ապրանքները:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան